9766

Բոլոր կարգերի-
կոսի դեմ

282
Դ-79

# ԲՈՂՈՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԷՄ

Հայոց ազգի գաւակի Հայոց ազգի խելքեւակործաեւ վիճակի համար Հայոց ազգի Պետքից.

Ի. քարտքու

282
Ղ-79

# ԲՈՂՈՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԷՄ

*Հայոց ազգի զաւակը Հայոց ազգի ինքնակործան վիճակի համար Հայոց ազգի Պետից է բողոքում*

ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ԽՈՆԱՐՀ ՈՐԴԻ
Ուսի՝ ԵՂԻՇԷ Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ
1909

Տպարան եւ Գրատուն
Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

23 JUL 2013

9766

65528.67

Յարգանքով եւ ակնածութեամբ նուիրում եմ Ռուսահայոց միա՛կ եւ առաջի՛ն հրապարակախօս մեծարգոյ Պ. Ս. ՍՊԱՆԴԱՐԵԱՆԻՆ, որ կարող է եւ գիտէ մի՞շտ Հոգի՛ տալ մեզ ջրաղացի չանչախներով պաշարուած Հայոց հոգեսպան աշխարհում :

ՀԵՂԻՆԱԿ

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Սեպտեմբերի 20-ին վեհափառ Հայրապետին յղեցինք մի գրութիւն, որ եւ ահա Հայ հասարակութեան Զգացմունքի, կամքի եւ Մտքի առաջն ենք դնում քանի մի յաւելումներով եւ Միջավայրին ու Քաղաքական ոգէին պատշաճ ծանօթութիւններով:

1909 թ. սեպտ. 20
Կ. Պոլիս

Ուստ՝ ԵՂԻՇԷ Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

# ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

## Ամենայն Հայոց Արքայազնագոյն Կաթողիկոս

## Տ. Տ. Մատթէոս Բ. Իզմիրլեանից

ՀԱՅՈՐԴԻ ԵՂԻՇԷ Տ. ՊՕՂՈՍԵԱՆԻ

Կ Ո Ղ Մ Ի Ց

Վեհափա՛ռ Հայր,

## ԲՈՂՈՔ

,, Եթէ սագի ձայն մը Կապիտոլիոն մը կ'ազատէ, ապա որո՞ւ ձայնն է, որ կ'արհամարհուի ''։

Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆՈՅ

'' Խրիմեանը եւ Իզմիրլեանը պարտական մնան Աստուծոյ դատաստանի առաջ ,,։

ՅԱԿՈԲՈՍ ՎՐԴ. ՇԱՀԲԱԳԼԵԱՆ

*Քնանդատութիւն արհամարհող, Քրնանդատութեան թշնամաբար նայող, Քնանդատութիւնը ջերմապէս չսիրող հասարակական գործիչը մի՛միայն Ոսկուն, Ծափին եւ Կուռիին հեշապնդեղ կարող է. Իսկ Ոսկին, Ծափը եւ Կուռը հասարակական կեանքի ամենավտանգաւոր եւ ամենազօրեղ թշնամիներն են։ Կրակը ոսկին զտում է աղբերից. Քնանդատութիւնը հասարակական կեանքի ԿՐԱԿՆ է։*

Հայ սիրտ, հայ խիղճ, հայ միտք ունեցող իւրաքանչիւր Հայ մարդ իրաւունք ունի ողբալու, բողոքելու, պահանջելու, խորհելու եւ գործելու արտաքին թոյլ, բայց ներքին զօրեղագոյն թշնամիներով շրջապատուած ապերջանիկ եւ լքեալ Հայութեան համար։ Լինի նա ժամկոչ թէ՛ Ամենայն Հայոց Կաթողիկոս, անուս նախարարչի թէ՛ ականաւոր ուսուցչապետ։

Հարկաւ ազգասիրութիւնը ոչ կաթողիկոսների մենաշնորհն է եւ ոչ էլ «Ազգային գործիչ» մեծաշռինգ տիտղոսը կրող Դաւանաւորների եւ Կործանիչների։ մանաւանդ որ գիտենք կաթողիկոսներ եւ աշխարհական «Պոեմիէռ պատրիոտներ», (1) որոնք Ոսկու, Ծափի, Կուռքի եւ մի Ալեքսանդր Նեւսկու շքանշանի համար մոլեգնաբար պատրաստ են եղել ամբողջ Հայ ազգը ծախելու այս կամ այն պետական, այս կամ այն կուսակցական կառավարութեան։

Ուստի, վեհափառ Տէր, թոյլ տուէք, որ Ձեզ հետ համարձակ խօսեմ. անվեհերութիւնից եւ անկեղծութիւնից Հայոց ազգը երբէ՛ք չէ կարող տուժել, այլ մի՛միայն անարիւն երկչոտներից եւ վատթար մարդահաճոներից։

Օսմանեան ազատութեան արշալոյսին Դո՛ւք ի լուր աշխարհի յայտարարեցիք (2), թէ Երուսաղեմից ամենա՛յն մանարկրկտութեամբ հետեւել էք Հայկական

(1) Առաջին հայրենասէր

(2) «Մշակի» թղթակից Պ. Սարուխանին



կեանքին։ ասել է, թէ քա՛ջ գիտէիք, ի՛նչ է նշանակում Հ։ Ց։ Դ։, ի՛նչ է նշանակում Հ։ Ց։ Դ։ եւ Հայոց ազգ։ ի՛նչ է նշանակում Խրիմեան Հայրիկ, ի՛նչ է նշանակում Խրիմեան Հայրիկ եւ Հ։ Ց։ Դ։։

Սակայն չափազա՛նց միամիտ պէտք է լինինք կարծելու, թէ միայն Խրիմեանն էր, որ անօրինակ պարծանքով եւ արժանապատուութիւն վարկաբեկող սրտով անընդհատ իւղ էր քսում Հ։ Ց։ Դ։։ թեան կառախումբի սրարշաւ անիւներին։

Հայութեան ողջ մթնոլորտի համար ակներեւ էր անհերքելիօրէն, որ Հ։ Ց։ Դաշնակցութիւնը, վեհափառ Տէր, մի կողմից ոգի ի բռին ճգնում էր Ձեզ կաթողիկոսացած տեսնել, իսկ միւս կողմից կատաղի փութկոտութեամբ եւ յսխուոն եռանդով աշխատում էր եւ դեռ աշխատում է իսպա՛ռ կազմալուծել Հայոց ազգի հասարակական միա՛կ օրինական եւ միա՛կ մտածելի ու հնարաւոր կազմակերպութիւնը (*), այն է՝ «Հայաստանեայց եկեղեցին»։

*) Թէ ինչո՛ւ Հայոց ազգին մի՛միայն եկեղեցական կազմակերպութիւն կարելի է տալ։ Թէ ինչո՛ւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Կ։ Պոլսի Տաճկահայոց Պատրիարքը մի՛միայն հոգեւորական կարող են լինել։ Թէ ինչո՛ւ Ամենայն Հայոց Կաթողիկոսից եւ Կ։ Պոլսի Տաճկահայոց Պատրիարքից չէ՛ կարելի խլել Հայոց ազգի տնտեսական, քաղաքակրթական եւ քաղաքական կեանքը եւ նոցա ձեռին միայն Սաղմոս ու Մաշտոց թողնել, եթէ իրօք որ կամենում ենք, Հայը գոյութիւն ունենայ եւ յառաջդիմէ, — այս ներկայ հրատարակութեան նպատակից դո՛ւրս է բոլորովին եւ ամբողջապէս վերաբերում է Հայոց ազգի մի՛միայն թերուանե-

Արդ՝ ի՞նչպէս հասկանանք այս աղաղակող եւ վերջի՛ն ծայր արտառոց հակասութիւնը. այս հարցին, վեհափառ Տէր, մե՛կ պատասխան տալ հնարաւոր է. կընշանակէ ուրեմն Հ. Ց. Դ.-թեան խորի՛ն համոզմամբ յանձին Իզմիրլեանի յարութիւն է առած Խրիմեանն իւր ամբողջ Խրիմեանութեամբ. ուրիշ խօսքով Հ. Ց. Դ.-ը անյողդո՛ղդ կերպով հաւատացած էր, թէ Իզմիրլեանի միջոցով պիտի կարողանայ հասնել իւր վերջնական գերակային (իդէային), այն է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան ասպարէզում միայն Սաղմոս ու Մաշտոց թողնել։ Այս մեկ։

Եթէ ես Իզմիրլեան լինէի, առանց այլեւայլութեան կը հրաժարէի Ամենայն Հայոց Կաթողիկոս լինելուց, որովհետեւ Հ. Ց. Դ.-թեան քուէներով Ս. Գրիգոր Լուսաւորչի Գահը բարձրանալ պարզապէս պղծել կը նշանակէ Աթոռը եւ Եղիշէի, Մեսրոպի, Սահակի բացարձակ գաղափարական յիշատակը. ա՛յն Եղիշէի, ա՛յն Մեսրոպի, ա՛յն Սահակի, որոնց յաջորդ՝ լուսաւորեալ դարերում մենք չունեցանք, իսկ չորս հազար տարուայ Հայոց պատմութեան աշխարհականների մէջ ոչ Եղիշէ՛ գտայ, ո՛չ Մեսրոպ՛ եւ ո՛չ էլ Սահակ։

---

ռիմ եւ ո՛չ թէ նաեւ ուսեալներին եւ անուսներին։ Այս մասին մի ուրիշ անգամ հաճութեա՛մբ բացատրութիւն կը տանք եկեղեցական եւ եկեղեցապետական խնդիրների մասին ամենա՛յն հեղինակաւորութեամբ ճառող, բայց Ընդհանուր եկեղեցական պատմութիւնից եւ Հայոց եկեղեցական պատմութիւնից, Ընդհանուր եկեղեցական իրաւարանութիւնից եւ Հայոց եկեղեցական իրաւաբանութիւնից մի տող իսկ չկարդացած ու չուսած Հայ համբակ թերուսներին։



Ինչո՞ւ. որովհետեւ Հ. Ց. Դ.-ը Ս. Լուսաւորչի Խորանը ո՛չ թէ վառ պահելու համար էր գլխապատառ քուէ տալիս Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան թեկնածուին, այլ բացառապէս ա՛յն ազգակործան, ա՛յն անարգ դիտաւորութեամբ, թէ ամենա՛յն հեշտութեամբ պէտք է կարողանայ հասնել աշխարհը գարմացնելու չափ թունդ Ընկերավարական նպատակներին՝ իւր քուէով ընտրեալ տուած կաթողիկոսի միջոցով եւ ձեռքով։

Հայոց ազգի տունն ուրեմն 1908 թ. հոկտ. 30-ին քանդուեցաւ, եւ սակայն ոչ ոք նկատեց այս։ Ինչո՞ւ. որովհետեւ այդ օրը «Համազգային ժողով»ը փոխանակ Պարտաւանքի, Վստահութեա՛ն քուէ էր տալիս Հ. Ց. Դ.-թեան՝ Զաքարէական լռութեամբ իւր մէջ ընդունելով նորա անդամներին. իսկ Հ. Ց. Դ.-թեան քուէները սիրայօժար եւ վեհափառական գուրգուրանքով ընդունող-կաթողիկոսացուն արդէ՛ն իսկ Սրբագործում էր Հ. Ց. «Սուրբ Դաշնակցութիւնը»։ Այս երկու։

Դո՛ւք, վեհափառ Հայր, քա՛ջ գիտէիք Հ. Ց. Դ.-թեան Ծրագիրը, Աշխարհայեացքը եւ մօտ քսանամեայ Դառնագոյն եւ Աշխարհասասան իրականութիւնը. բայց եւ այնպէս նոքա Ձե՛զ էին մոտենում եւ Դո՛ւք՝ նոցա։ Աշխարհի ստեղծագործութիւնից մինչեւ այսօր ապահովապէս որեւէ մահկանացու ականատես չէ եղած մարդկային մտքի համար բոլորովի՛ն անբացատրելի այս սարսռալի՛ հոգեբանութեան։ Ի մե՛ծ դժբախտութիւն նախ անգլո՛ւխ, անսի՛րտ, անխի՛ղճ Հայոց ազգի եւ ապա Ձե՛ր կոչման, Ձե՛ր անձնաւորութեան, Ձե՛ր պաշտօնին տրամաբանութիւնը

հարկադրում է Ձերդ Վեհափառութիւնը դիակնացնելո՛ւ չափ զօրեղ չեչտով եղրակացնեմ. հետեւապէս Իզմիրլեանը կամ անկե՛ղծ է Հ.Յ.Դ.-թեան հանդէպ կամ թէ նոցա ջանքերով կաթողիկոսանալուց յետոյ Ս. Լուսաւորչի Գահիառաջ երկիւղածորէն վա՛յր պէտք է դնէ իւրդիմակը. միջին ճանապարհ չկայ ամենեւին։ Երկու դէպքումն էլ ...կանգ եմ առնում այս տեղ, Վեհափառ Հայր, խընայելով Ձեր ալեզարդ սրտին. որովհետեւ գիտե՛մ հաստատապէս, եթէ Ձեր այս վարմունքի իսկական և արժանի անունն արձանագրեմ, անպայման պէտք է դառնանք և լաց լինէք. միայն կ'աղաչեմ, թո՛յլ տուէք Հայրաբար, աւելացնեմ. եւ այս ընթացքին հետեւողը Ս. Սահակի յաջորդն էր, Նազովրեցու աշակերտը։ Այս երեք։

Թուում էր, թէ այսքա՛ն երկար տառապանքից յետոյ. Հայութեան ծոցից 300,000 գլուխ մորթոտուելուց յետոյ, Մայր սրբազան երկիրը տնտեսապէս, քաղաքակրթապէս, քաղաքականապէս մոխիր դառնալուց յետոյ, Հայաստանը հայազգիներից դատարկուելուց յետոյ, պէտք է որ արբագրած լինէիք Ձեր դիւանագիտութիւնը և խորապէս համոզուած, թէ Հայութեան օջախը մարեցին Արեւելեան, Արեւմտեան բիւրոների և ժնեւի անսի՛րտ, անխիղճ, անգլուխ քաղաքագէտները. թէ Յեղափոխական և Միջամտութեան խաղախանութիւնը կոչուած էր և միշտ էլ կոչուած կը լինի Հայութիւնը թէ՛ Պարսկահայրում, թէ՛ Տաճկահայրում և թէ՛ Ռուսահայրում խպտառ ջնջելու միայն և ո՛չ թէ ազատելու (1)։

(1) Ընթերցողը թո՛ղ միտքս սխալ չհասկանայ. ո՞ր



Սակայն, աւա՜ղ, միանգամա՛յն խաբուած և վհատած ենք. Պոլսի Իզմիրլեան Վեհափառը կատարելապէ՛ս յիշեցրեց Պոլսի նախկին Իզմիրլեան Պատրիարքը. «Ազգըն ինձ ընտրե՛լ է, Ա՛զգն էլ միայն կարող է հրաժարեցնել»։ Վեհափա՛ռ Տէր, Ձեր այս Վեհապետական յայտարարութեան զոհ գնացած հազարաւոր մեծ ու փոքր հայ զաւակների արեան ձայնը Ձեզ ճանապարհ չպէտք է տայ, լա՛ւ գիտցէք։ Սակայն կ'ընդունեմ խոնարհաբար, որ Դո՛ւք՝ առանց Սուլթան Համիդն իւր գահի վրայ իբրեւ թէ լեղապատառ արած այդ յայտարարութեան երբե՛ք չէիք կարող արժանանալ «Երկաթի» մակդիրին։ Բայց քա՛ջ իմացած եղէք, Երկնքում այդ երկաթից Սահակն ու Մեսրոպը շիկացած պսակ չինած պէտք է բոլորե՛ն Հայոց ազգի համար խոհերով կընճռոտուած Ձեր ճակատը. իսկ Երկրում պատմաբանը գրիչ չինած պէտք է փորէ Ձեր Յաղթական փառքի ամբո՛ղջ պատուանդանը։ Վեհափա՛ռ Տէր, այդպիսի մեծադղորդ յայտարարութիւն անելու համար Բոսֆորում կանգնած զրահաւորնե՛ր պէտք է ունենայիք, Պատրիարքարանի առաջ էլ կազմ պատրաստ գնդացիրներ (պուլեմիոտներ)։ Տարակոյս

---

լուսամիտ և բարոյական մարդու համար պարզ չէ, թէ գերագո՛յն առաքինութիւն է նահատակուիլ, իսկ գերագո՛յն անմարդութիւն է ուրացող լինել. սակայն այն էլ պէտք է գիտենանք, որ Նահատակութեան և իշու նահատակութեան նմանութիւնը զուտ բառական նմանութիւն է և ո՛չ թէ գաղափարական և իրական. քսանամեայ մի ողբալի՜, մի ապշեցուցի՜չ իշու նահատակութիւն կայ այսօր ծանրացած Հայոց ազգի ուսին։

չկայ, թէ այս այն ժամանակ հասկանալու համար նուրբ միտք և դիւանագիտական մեծ խելք ունենալու բնա՛ւ պէտք չունէիք, այլ միայն անհրաժեշտ էր, որ Եղիշէի, Մեսրոպի, Սահակի խիղճն ու սի՛րտը կրէիք Ձեր կրծքի տակ և ո՛չ թէ Երկաթի համար մարելու պատրաստ սիրտ։ Այս չորս։

Հ. Ց. Դ.-թեան քուէներով ընտրուած Ամենայն Հայոց Վեհափառ և Սրբազնագոյն Կաթողիկոսը Պոլսում անվերջ խնկարկւում էր և Հ. Ց. Դ.-թեան գերագոյն անդամների փափկասուն բազուկների վրայ օրօրւում. մինչ ա՛յն աստիճան, որ Երանելի Ակնունին յանդգնեց գոչելու ամենա՛յն հրապարակականութեամբ. «Սրբազա՛ն, Դուք այստեղ Պատրիարք ընտրուեցաք, վաղն ալ Էջմիածնի մէջ Հայոց Կաթողիկոս պիտի ընտրուիք. հոն դէմ առ դէմ պիտի գաք Հայերն հարստահարող, Հայերը փճացնող կառավարութեան մը. բայց չվհատիք, սի՛րտ առէք, որովհետև այնտեղ, Էջմիածնի Հայրապետական գահուն կողքին կանգնած պիտի գտնէք Դաշնակցական Բանակը, որ Ձեզ զօրավիգ պիտի ըլլայ Ռուս կառավարութեան դէմ (*)»։ Այսպէս միայն Հայոց ազգի ամենա-

(*) Ո՛վ Ակնունի, Հայոց Կաթողիկոսին Դաշնակցական բանակի զօրավիգ լինելը չուզեցինք, թող այդ «Դաշնակցական բանակը» ձեր ընկերներին ազատէ գոնէ, գէթ ձեր սիրած Աւետիք Ահարոնեանին. մարդուն լաթի պէս այս ծակից այն ծակն են խոթում, էլ



ծայրայե՛ղ դաւաճանը և ամենախերի՛մ թշնամին կարող էր ճառել ի լուր ամբո՛ղջ աշխարհի։

Բայց ես ամենեւի՛ն չեմ ցաւում, որ մի «Պռեմիէռ պատռիոտ» իւր «Պռեմիէռ» ծառայութիւնն է մատուցանում 2000 տարի յանիրաւի նահատակուող մի ազգի, այլ խելագարւում եմ միմիայն այն բանից, որ Ս. Սահակի յաջորդը թոյլ է տալիս իրեն, Ակնունիներն իւր առաջ մինչ ա՛յն աստիճան... լռում եմ այստեղ, չեմ կարող իսկական և պատշաճ բառն արտասանել, քաշւում եմ Ձերդ Վեհափառութեան Սրբազնագոյն կոչումից։ Ակնունիները կը գան ու կ՚երթան, բայց Իզմիրլեանները, Վեհափառ Տէր, կը գան ու կը մնան. այս է գերագոյն չարիքը։ Այս հինգ։

Խրիմեանը Հ. Ց. Դ.-թիւնը փոքր Մասքսի գլխին

ո՞ր օրուայ համար է Էջմիածնում կանգնած «Դաշնակցական Բանակը». համբերի՛ր, ընթերցող, խայտառակութեան դեռ փոքրի՛կ երեսն է այս։ Ո՛վ Ակնունի, ի՞նչպէս պատահեցաւ, որ Էջմիածնի Հայոց Կաթողիկոսին զօրավիգ լինելու համար պատրաստուած «Դաշնակցական Բանակի» թէ՛ զինուորներին, թէ՛ սպաներին, թէ զօրավարին և թէ ընդհանուր հրամանատարին Ռուսաց ոստիկանութեան ձեռից ազատելու համար ձեր զօրավիգութեան կարօտ Հայոց Կաթողիկոսի ոտնները էք լիզում այժմ. վերջապէս խոստովանո՞ւմ էք, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը չա՛տ աւելի զօրեղ է, քան թէ Երկրագնտի բոլո՛ր Դաշնակցականների հաւաքական ոյժը. Հայոց Ազգը այս հարցին պատասխան է պահանջում ձեզնից, ո՛վ Ակնունիներ, ո՛վ «Գործ», ո՛վ «Ազատամարտ», ո՛վ Բիւրոներ, ո՛վ ժնեւ։

էր թողել, երբ պատրաստում էր իւր վերջնական ա՛յնքան բաղձալի հրաժեշտը տալու Հայութեան ու Երկրին· իսկ Դուք Ձեր Երկաթութեամբ առո՛ք փառօք բաղմեցրիք Մեծ Մասքսի գագաթին· ինձ համար դեռ ևս հարց է, եթէ Հայոց ազգին մատուցած Ձեր բոլո՛ր աւագ ու կրտսեր ծառայութիւնները երկաթի վերածենք, մի հայորդու գերեզման փորելու բահի պահանջածի չափ երկաթ կը ստանա՞յ արդեօք Հայոց ազգը։ Ուստի երբեք չեմ զարմանում, որ Ամենայն Հայոց վեհափառ Կաթողիկոսի և Կ· Պոլսի Տաճկահայոց Ամենապատիւ Պատրիարքի Գլուխնին ուսերնին լինելով հանդերձ Տաճկահայոց Ազգ· Սահմանադրութիւնն այնքան մշակւում է և յառաջդիմում, որ առանց ամաչելու ընդունում է, թէ Հայոց ազգի գաղափարական բարոյականն անխախտ պահելու և Հայոց ազգի եկեղեցական կազմակերպութեան անձնուէր ջատագով հանդիսանալու կոչուող պաշտօնէութեան յանկարծ անդամ կարող է լինել նաեւ Հ· Յ· Դ·-ը, այսինքն այն կուսակցութիւնը, որ թէեւ ծնւում, սնւում և մեռնում է ազգի դրամով միայն, բայց և պոռնկացնում է այդ Ազգի 4000 տարուայ պատկառելի բարոյական ունեցող աղջիկներին, անամօթաբար քանդում Հայոց եկեղեցին և Ազգը գահավիժօրէն կորուստի մատնում։ Այն կուսակցութիւնը, որ իւր «Պլատֆորմիստի» ձեռքով Տաճկահայքում բռնի կերպով արգելում է թաղում, պսակ, մկրտութիւն· պատարագիչ քահանային վայր է իջեցնում Սեղանից, աւետարան, Քրիստոս հայհոյում, անարգում։ Այն կուսակցութիւնը, որ եկեղեցու ոսկեղէն, արծաթեղէն խաչերը, անգին հնութիւնները հալեցնում,



ծախում է յօգուտ իւր անյագ գրպանի։ Սահմանադրութիւնն ահա այսպիսի կուսակցութեան էլ է հրաւէր կարդում, որպէս զի յետոյ Հայոց ազգի ներկայ քաղաքական ծանր ճգնաժամին Շահրիկեաններ, Կոմսեր, Զոհրապներ և Ձերազներ խաղալի՛ք դարձնեն Ազգային Երեսփոխանական ժողովը· դաւաճան և կեղտոտ միտումներով քաղաքական, կրօնական ժողովներն իրարով ձգեն· Հայոց եկեղեցու նուիրապետութիւնից պահանջե՛ն, որ մի՛միայն իւր Սաղմոսն ու Մաշտո՛ցը ճանաչէ. և վերջն էլ միանան երիտասարդ Թուրքերի «Միութեան և Յառաջդիմութեան» Կոմիտէին, որպէս զի նոքա՛ էլ համարձակ կարողանան ասել Ամենապատիւ Պատրիարքին· «Տեղդ դի՛նջ նստիր և միայն ա՛ղօթքդ ճանաչիր, թէ չէ՛···» (*)։ Ձե՛մ չչմում այս բոլորից, որովհետեւ ոչ Ս· Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոս ունինք և ոչ էլ Կ· Պոլսո՛ւմ Տաճկահայոց Պատրիարք։

Եթէ Դուրեանը Հ· Յ· Դ·-թեան «Պլատֆորմիստ» Շահրիկեաններով, Կո՛մսերով, Զո՛հրապներով պաշարուած Ազգային Երեսփոխանական ժողովին նախագահելն իւր անձնաւորութեա՛ն, իւր կոչման և իւր պաշտօնի՛ն անարդա՛նք համարած լինէր ժամանակին, այսօր Քաղաքական և Կրօնական ժողովների բոլո՛ր ձայների միահամո՛ւռ ոյժի զօրութեամբ Պետական կառավարութեան հրաժարական

(*) Ձակերտների մէջ առածն իմ եզրակացութիւնն է՝ հանած Պատրիարքների առանձնաշնորհումների մասին ցարդ լոյս տեսած օտար և ոչ օտար պարբերական մամուլի երկարաշար յայտարարութիւններից։

ՊԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
Ա. ԿՄ Ա. Մասիսյան

տալուց յետոյ իւր շուրջը ո՛չ թէ կրօնական ժողովը և հոգեւորական երեսփոխանները կ՚ունենար միայն, այլ նաև քաղաքակա՛ն ժողովը և ո՛ղջ երեսփոխանական ժողովը։ Նուիրական պարտք կը համարեմ ամբո՛ղջ ձայնովս կրկնել ու գոռալ՝ ոչ Ս. Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոս ունինք և ոչ էլ Կ. Պոլսում Տաճկահայոց Պատրիարք՝ բայց Երկաթի Իզմիրլեաններ, Խրիմեաններ՝ Դուրեաններ՝ այնքան ունինք ո՛ր, ա՛սեղ ձգելու տեղ չը կայ, սկսած բեւեռներից մինչեւ հասարակած, հասարակածից մինչեւ բեւեռներ։ Այս վեց։

Ատանայի ջարդի ազդեցութեամբ, Վեհափառ Տէր, դա՛ր ձեալ անմիջապէս բռնուեցաք Միջամտութեան քաղաքականութեան անբուժելի ցաւով՝ քիչ մնաց, սամբո՛մ Ասիան Ռուսաց պետութեան տայիք՝ երեւի թէ նախօրօք եւրոպական բոլոր կաբինետների հաւանութիւնն արդէն առել էիք և նոցա խոստումն էլ ապահովել Հայոց աղգի զինուորական ոյժով։ Ապերա՛խտ Ռուսներ՝ որ չեն ձեռնարկում Ձերդ Վեհափառութեան արձանը կանգնելու Նեայի ափերին։ Եթէ Միջազգային յանձնաժողովը Հաագայում գործելիս լինէր, Ահարոնեանին էլ Իւթիւճեանի հետ հո՛ն կ՚ուղարկէիք։ Սըրտատրո՛փ սպասում էինք՝ թէ կանոնաւոր կերպով կը հերքուին այս զգայացունց լուրերը՝ բայց չէ՛, մինչև անգամ լոյս տեսաւ՝ թէ ճի՛շդ են Ձեր յայտարարութիւնները։ Միջանկեալ՝ այժմ Ձեր հոգու խորքից ողբացէ՛ք՝ որովհետև Լիւադիայում Օսմանեան և Ռուսիան հաշտւում են՝ սակայն ներեցէ՛ք՝ Ակնունու՝ Ս.



Էջմիածնում կանգնած «Դաշնակցական զօրաբանակով» գուցէ կարողանաք խանգարել և կրկին լարել երկու պետութեան յարաբերութիւնը (1)։

Այլեւս գժուած՝ հետեւեալ տողերը չարադրեցի Ձերդ Վեհափառութեան խմաստնագոյն քաղաքագիտութեան առթիւ և յղեցի մի հայ խմբագրի՝ խմանալով հանդերձ՝ որ չեն տպի՝ բայց միանգամա՛յն անկարող էի զսպելու խստօրէն գրգռուած և յուզուած նեարդերս՝ Վեհափա՛ռ Տէր՝ ճշմարիտ՝ չէ՛ի կարող չգրել այս տողերը և որևէ Հայ մարդու չէ՛ի կարող չկարդալ՝

# ԱՌԱՋԱՐԿ

## ԱԶԳԻ ԿԱՄՔԻՆ

Պատմութիւնը պերճախօսօրէն ցոյց է տալիս՝ որ երբ Ամենայն Հայոց Կաթողիկոսները զբաղել են քաղաքականութեամբ՝ Ազգը իւրաքանչի՛ւր անգամին էլ գլխովին տուժել է։

Թերթերից իմանում ենք՝ որ (եթէ ճիշդ է) նորընտիր Ամենայն Հայոց Վեհափառ և Սրբազնագոյն Կաթողիկոս Տ. Տ. Մատթէոս Բ. Իզմիրլեանն ընթանում է

---

(1) Ընթերցողն անշուշտ կը նկատէ՝ որ մեր այս միջանկեալ դիտողութեամբ հեգնո՛ւմ ենք միայն՝ որովհետև թէ իրար վերաբերմամբ ի՛նչ դիրք կը բռնեն Ռուսիան և Օսմանիան՝— այս ոչ ի՛մ խառնուելիք բանն է և ո՛չ էլ մանաւանդ Հայոց ազգի՝ այլ մի՛միայն յիշեալ երկու պետութեան։

իւր նախորդների ամենախելագա՛ր և ամենաազգակործա՛ն չաւղով։ Ուստի առաջարկում ենք Ազգի կամքին, որ կամ հրաժարեցնէ իւր Կաթողիկոսին և յետ դարձնէ Ս. Պետերբուրգի ճանապարհից և կամ թէ Բարձրագոյնս արգիլէ Կաթողիկոսին սր, ո՛չ Ս. Պետերբուրգում և ոչ էլ Ս. Էջմիածնում քաղաքականութեան մասին ոչ խօսէ և ոչ էլ գրէ (*)։ Այս էլ եօթ։

Վե՛րջապէս հասաք Ս. Էջմիածին. բայց մինչ ա՛յն աստիճան փոխուած յայտարարեցիք Ձեզ, որ Պոլսի Իզմիրլեան Վեհափառի և Ս. Էջմիածնի Իզմիրլեան Վեհափառի նմանութիւններից միայն Իզմիրլեան անունը մնաց. կամեցայ թուչնել Ս. Էջմիածին և ամենա՛յն ջերմեռանդութեամբ, որդիական ամենա՛յն խոնարհութեամբ համբուրել Ձերդ Վեհափառութեան ոտները։

Սակայն ո՞ր Իզմիրլեանին հաւատանք, կ. Պոլսի՞ թէ Ս. Էջմիածնի. յամենայն դէպս Հայոց ազգը, եթէ որ միայն անսիրտ, անխիղճ և անգլուխ անհատներից չէ բաղկացած, պէտք է Լուսաւորչի Գահը մի՛շտ հեռու պահէ երկու բոպէի մէջ ջրից կրակի փոխուող, կրակից ջրի փոխուող Իզմիրլեաններից։ Հայոց ազգն ամենևին կարիք չունի ո՛չ Հայրիկների, ո՛չ Երկաթների և ոչ էլ Ադամանդների։

(*) Այս ամենախելագարութիւնը և ամենաազգակործանութիւնը ի հարկին պատրաստ ենք ապացուցանելու և այն էլ ո՛չ միայն à priori, այլ և à posteriori, այսինքն թ՛է մտքով և թ՛է փորձով։



Եւրոպացի հայասէր համբաւաւոր բոլո՛ր ուսուցչապետներն ու գիտնականները և Հայոց ազգի Եւրոպական խորը և լայն լուսաւորութիւն ստացած հոգևորական, աշխարհական լաւագոյն մտածողները ջե՛ր պաշտպան են Հայոց ազգի եկեղեցական կազմակերպութեան։ Եւ եթէ այսօր անուս և գանգերում Եւրոպական լուրջ միտք կրող բոլո՛ր հայ զաւակներն ամուր կպած են իրենց կրօնին ու եկեղեցուն, սորա պատճառը բնաւ սովորական դարձած այն անհա՛մ, այն անիմաստ և ապշութիւն ու թերուսութիւն ապացուցանող դարձուածքը չէ, թէ Հայոց ազգը տիրացու, կրօնական ժողովուրդ է, — երբէ՛ք Հայոց ազգը տիրացու ժողովուրդ չէ և ոչ էլ կրօնական (1), ինչպէս որ իւրաքանչիւր կրօնական է Բողոքականը, Կաթոլիկը, Օրթոդոքսը, — պատճառը միմիայն այն է, որ Հայոց եկեղեցին ոչ թէ մեկ սոսկական կրօնական խմբակցութիւն է, այլ Հայաստանեայց եկեղեցին Հայոց ազգի համար ամենից առաջ և էապէս է Հայոց հանրապետութիւն իւր տնտեսութեամբ, իւր քաղաքակրթութեա՛մբ, իւր քաղաքականութեա՛մբ և իւր ընտրովի նախագահով. որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ոչ թէ մեկ հասարակ քահանայապետ է, այլ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայոց ազգի համար ամենից առաջ

(1) Թէ յիրաւի Հայոց ազգը տիրացու, կրօնական ժողովուրդ չէ և թէ ինչու այդպէս չէ, պարտականութիւն կը համարենք մի այլ անգամ ցոյց տալու տարրական, միջնակարգ և համալսարան աւարտած ու չաւարտած հայ թերուսներին։

և էապէս է մեկ Ռուզվելտ (1)։ ահա՛ թէ ինչո՛ւ ոչ թէ իմացական փչրանքներով ծնուած, սնուած և մեծացած ամբարտաւան «Գոեմիէռ ատէիստները»(2), այլ իմաստասիրական անխո՛նջ աշխատանքով և փիլիսոփայական դառնաղի՛ տանջանքով հակաստուածականու-

(1) Միտքս սխալ չհասկանան Հայոց ազգի Թշնամիները։ չե՛մ ուզում ասել, թէ մենք հայերս զրահաւորներ, գնդացիրներ, թնդանօթներ, զօրաբանակներ ունինք, այլ միայն ա՛յն եմ կամենում պարզել, որ եթէ երկրագնտի վրայ եղած բոլո՛ր Ֆրանսիացիների ուղղից հանենք Աստուած, հաւատ, կրօն գաղափարները։ նոցա բոլո՛ր եկեղեցիները, մատուռներն ու վանքերը մոխիր դարձնենք։ նոցա բոլո՛ր կուսակրօն և ոչ կուսակրօն հոգևորականներին ծովը նետենք, բոլո՛ր ժողովարաններն այրենք, Ֆրանսիական ազգը դարձեալ կը մնայ ու կը մնայ, քանի որ ունի սեպհական պետութիւն, քանի որ իւր ազգի հասարակական կազմակերպութիւնը պետակա՛ն կազմակերպութիւն է և ո՛չ թէ եկեղեցական. իսկ եթէ նոյն աւերածութիւնները Հայաստանում Հայոց ազգի մէջ գործենք, Հայոց ազգն էլ մոխիր կը դառնայ, որովհետև Հայոց ազգը սեպհական պետութիւն չունի և նորա հասարակական կազմակերպութիւնը ոչ թէ պետական է, այլ միայն եկեղեցական։ թէ ինչո՞ւ սեպհական պետութիւն չունենալու դէպքում իրերի այլ վիճակ է ստեղծւում, այս մասին դատելու և հասկանալու ոչ ընդունակութիւն և ոչ էլ գիտական պատրաստութիւն ունին մեր դաշնակցական քաղաքագէտները։

(1) Առաջին հակաստուածական։



թեան յանգած ամենածայրայեղ, բայց և մի և նոյն ատեն չա՛տ համեստ բոլո՛ր հակաստուածականներին անգամ Հայոց եկեղեցին պաշտպանելու համար հպարտութեամբ կրծքերնին ղէմ կը տան թշնամու սուիններին այն հասկանալի ուղղամտութեամբ, թէ «Ատէիստ» լինել դեռ եւս չէ նշանակում միաժամանակ նաև Ազգուրաց լինել, մոռնալով Իրականութեան և Բանականութեան ամեն մի պահանջ (1)։ Եւ քանի որ այս այսպէս է, ուստի Ս. Էջմիածնում մենք պէտք է տեսնենք ոչ թէ Հայրիկներ, Երկաթներ, Ոսկիներ կամ Աղամանդներ, այլ միմիայն սի՛րտ, խի՛ղճ, գլո՛ւխ ունեցող մեկ սա՛րդ Եղիշէներ, Մեսրոպներ և Սահակներ։

Հայոց ազգը տակաւին խորհելի՛ ունի իւր Կաթողիկոսի մասին, որովհետև ամենևի՛ն ապահովուած չէ, թէ Պոլսի Իզմիրլեան Վեհափառից վայրկենապէս Ս. Էջմիածնի Իզմիրլեան Վեհափառ դարձող իւր Կաթողիկոսը չէ կարող մի օր էլ յանկարծ Ս. Էջմիածնի Իզմիրլեան Վեհափառից Պոլսի Նախկին Իզմիրլեան Վեհափառ դառնալ։

«Շնչաւոր կուռքերի վտանգը» յօդուածս ողբացեալ և սիրեցեալ Ազգիս մատուցանելուց յետոյ, սրբազան պարտք կը համարեմ այժմ էլ Ձի՛րդ Սրբութեան նուիրել, որովհետև խորապէս համոզուած եմ, Վեհա-

(1) Սակայն ընդունում եմ, որ յիշեալ հայ թերուսները հրապարակի վրայ են դրած մի հիմնական հարց։ «Հայոց ազգը պիտի պահենո՞ք թէ չպիտի պահենք»։ այս մասին ևս խոստանում ենք թերուսներին հաշիւ տալ, պարզելով այն ընդհանուր հարցը, թէ ընդհանրապէս պէ՞տք է պահել Ազգութիւնը։

փառ Տէր, որ եթէ Ձեր «Երկաթը» «Ադամանդի» փոխել խոստանան, ա նպայման կը գերադասէ Նորեն Պոլսի Իզմիրլեան Վեհափառ դառնալ։

## ՇՆՉԱՒՈՐ ԿՈՒՌՔԵՐԻ ՎՏԱՆԳԸ

Մտքի անմշակութեան, անզարգացողութեան և անթափանցականութեան հոգեբանութեամբ պէտք է բացատրենք անձնաւորութեան կուռքացումը։ Դարերի շերտաւորումները և ցեղերի ունակութեան որակութիւնները գալիս են փորձականօրէն հաստատելու յիշեալ դրութիւնը։ Լեւ Տալստոյն, օրինակ, Մոսկէսի դարում կը դասուէր աւագ մարդարէների դասը, իսկ թաթարական-մոնղոլական հոգեբանութեամբ կը դառնար կրօնական խանդավառ պաշտամունքի առարկայ։ Հոտեւապէս անձնաւորութեան կուռքացումը լաւագոյն չափ է կուռքի հեղինակների մտքի զարգացման և կորովի։

Հայ ոգին, նոյն իսկ օտար պատկառելի հեղինակաւորութիւնների վկայութեամբ, կրում է խորն ազատականութեան կնիք։ Նա ի վիճակի է իսկոյն և հնչութեամբ ըմբռնելու դաւանանքների խորտակման բացարձակ կարեւորութիւնը։

Դաւանանքների այս հալածանքը և դաւանականութեան այս հոգեբանական հակակրութիւնը պէտք է հիմնաբանենք ոչ թէ Հայ ոգու մշակութեան (կուլտուրայ) յետամնացութեամբ ու թերութեամբ, այլ միմիայն այն բանով, որ Հայ մտքի էութիւնը հենց նոյն ինքը քննադատականութիւնն է։

Սակայն Հայ մտքի այս բնորոշումը և Հայի նորագոյն պատմութեան արձանագրած Շնչաւոր կուռքերի



գոյութիւնը յայտնագործում են յիրաւի մի խոշոր հակասութիւն։ Բայց այս լոկ երեւութական է։ Շնչաւոր կուռքերի անհատական ու հասարակական արժանիքների և նոցա հեղինակների անձնաւորութեան ու գործի իսկական չարժաւորիչների քննութիւնից կը գանք այն եզրակացութեան, որ նման երեւոյթներն այստեղ ոչ թէ նոյն պատճառներից են առաջացել, այլ բոլորովին տարբեր, այսինքն Հայ կեանքի Շնչաւոր կուռքերի ծագման պայմանը ոչ թէ դաւանականութիւնն է, այլ կուսակցականութիւնը։ Եթէ իրօք Հայ նորագոյն Շնչաւոր կուռքերի գոյացման հիմունքը դաւանականութիւնը լինէր, ապա այս նոյն ազգը հնումն աւելի ևս հակուած պիտի լինէր Շնչաւոր կուռքեր ստեղծագործելու։ մի բան, որ չենք գտնի Հայ ազգի պատմութեան մէջ։ Եթէ, օրինակ, Գրիգոր Արծրունու, Խրիմեան Հայրիկի նման անձնաւորութիւններ նորագոյն ժամանակում կուռքանում են, ապա Վարդան Մեծ, Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Աբովեան, Նալբանտեան, Նազարեան հնագոյն շրջանում անպայման Եհովա պիտի դառնային։ Ահա այս համմասական մտքով է որ ասում ենք, թէ հնումը Հայ միտքն անձնաւորութիւններից Շնչաւոր կուռքեր չէ յօրինել։

Հայ ազգի նորագոյն Շնչաւոր կուռքերը ծնունդ են ոչ թէ Հայ հաւաքական ԵՍի հոգեբանութեան, այլ միայն այս կամ այն կուսակցութեան կաղապարի ձուլածոյ կերտուածք։ Ուշադրութեան արժանի է այս անձնաւորութիւնների ոչ միայն կուռքացումը, այլ և յատկապէս այն, որ նոքա կուռքանալու հիմունքները և արժանիքները չունենալով հանդերձ են կուռքացել։

Հայոց պատմութիւնը ցոյց է տալիս, որ Հայ լաւա-

գոյն մարդիկ ոչ միայն չեն կուռքացել, այլ ընդհակառակը խստիւ հալածուել են. ասել է, թէ Հայ կեանքում կուռքացումը վկայում է կուռքացած անհատի աւելի բացասական քան թէ դրական կողմերին։ Կուռքանալու արժանի, բայց հալածուած անձնաւորութիւնները Հայոց պատմութեան մէջ երևում են իբրև անզուգական ոյժեր, որոնք ժամանակին՝ առանց Ոսկու և Փառքի նշանաբանը դաւանելու՝ անկեղծօրէն գործադրուել և սպառուել են յօգուտ Հայ ազգի, իսկ ընդհակառակը կուռքանալու անարժան, բայց արդէն իսկ աստուածացած անհատները գիտակցաբար թէ անգիտակցաբար հանդիսացել են Հայ ազգի գոյութեան հիմունքները խախտողներ։

Ընթերցողի հարցասիրութեանը գոհացում տալու համար թուենք քանի մի նորագոյն նշանաւոր կուռքեր՝ Արիստակէս Սեդրակեան, Գրիգոր Արծրունի, Խրիմեան Հայրիկ, Քրիստափոր Միքայէլեան, Անդրանիկ, որոնք դեռ ևս չեն ստացել իրենց հատուցումը՝ միայն Պատմութիւնը կարող է նոցա արժանապէս վարձատրել, և ո՛չ թէ կաչաղակի դերը ստանձնած գործիչ մակդիրաւորները և իրենց անգլուխ քարվանները։

Ցաւո՛ւմ ենք խորապէս, որ Հայ ազգը Շնչաւոր կուռքերի մատուցած զառնութեան բաժակի մրուրը դատարկելիս, դարձեալ իւր ծոցը առաւ մի նոր պահեստի, պատրաստի և նոր հովերով թարմացրած Շնչաւոր կուռք։ Հայոց ազգ, զգուշացի՛ր քո այս ներկայ Շնչաւոր Մեծ կուռքից (*)։

1909 Մայիս 26 ԱՆՑՈՐԴ՝

Կ. ՊՈԼԻՍ Ուսի՝ ԵՂԻՇԷ Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

(*) «Գարուն», Ա. Տարի. Թիւ 24



# ՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԴԵՌ ԵՒ

Իւրաքանչիւր ազգ իւր գոյութիւնը հաւաքաբար պահելու և քաղաքակրթուելու համար անխուսափելի անհրաժեշտութեամբ ձգտում է որ և է հնարաւոր կազմակերպութեան, որի ամենանշանաւոր եղանակները պետական եւ եկեղեցական ձեւերն են։

Հայոց ազգը եկեղեցական հանրապետութիւն է, որի վարչութիւնը կոչուած է հսկելու Հայի գոյութեանը և քաղաքակրթութեանը։

Թէ՛ ծիսական, թէ՛ վիճակային. թէ՛ թեմական, թէ՛ կենդրոնական, թէ՛ ընդհանուր վարչութիւնն իւր համապատասխան խորհրդարանի որոշումներով է միայն կառավարում իւր համապատասխան հանրապետութիւնը. ասել է, ամբողջ ազգը ինքն է իրեն կառավարողը։ Հետևապէս Ազգի Գերագոյն իշխանութիւնը Համազգային ժողովն է, իսկ Գերագոյն վարչապետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը։

Երկրագնդի վրայ ապրող իւրաքանչիւր հայ մարդ գիտէ, որ առանց ծիսական, վիճակային, թեմական, կենդրոնական խորհրդարանների որոշման ոչ ոք անպատիժ կերպով ոչինչ չէ կարող անել ծիսական, վիճակային, թեմական, կենդրոնական հանրապետութիւնների անունով, հաշուով և համար։

Բայց դորա հակառակ երկրագնդի վրայ ապրող ամեն մի հայ մարդ էլ գիտէ, որ քսան տարի է, ինչ որ կուսակցութիւններ են գործում Հայոց եկեղեցական հանրապետութեան մէջ Հայոց եկեղեցական հանրապե-

տութեան անունով, հաշուով և համար առանց սակայն Հայոց եկեղեցական հանրապետութեան Գերագոյն խորհրդարանի որոշման· հետևաբար քսան տարի շարունակ կուսակցութիւնները գործել են Հայոց եկեղեցական հանրապետութեան Սահմանադրութեան բացարձակապէս հակառակ կերպով։ Եւ որովհետև այդ կուսակցութիւններն իրենց գոյութեամբ և իրենց գործունէութեան եղանակով կատարելապէս հակասահմանադրական են եղել, ուստի Ազգը ոչ միայն չէ տեսել նոցա իր համար ծրագրած նպատակի իրագործումը, այլ և քաղաքակրթապէս չափազանց տուժել է, իսկ նիւթապէս բոլորովին մերկացել։

Փորձը մի քանի անգամ ցոյց է տուել, որ այս հակասահմանադրական վիճակին վերջ տալ անհնարին է լրագրական հարուածումներով և լրագրական խարազանահարումներով· պատճառի մասին աւելորդ եմ համարում ծանրանալ· այդ ըստ ինքեան պարզ է։ Եւ եթէ կամենում ենք խոսա՛ռ բառնալ այս հակասահմանադրական երևոյթը և ապահովել, որ ապագայում այսպիսի արարք տեղի չունենայ Հայոց եկեղեցական հանրապետութեան մէջ, ապա միա՛կ և ամենազօրե՛ղ միջոցն այն է, որ Հայոց եկեղեցական հանրապետութեան Գերագոյն խորհրդարանն իւր գերագոյն ատեանի առաջ քաշէ թէ՛ Հայ Եկեղի· Դաշնակցութիւնը և թէ՛ մնացած բոլոր կուսակցութիւններն իրենց նպատակով, միջոցներով, գործունէութեամբ, գործելակերպով, հետեւանքով, հաշիւներով, ազգից կողոպտած միլիոններով, Խրիմեանի (1) միջոցով ստացած տասնեակ միլիոն-

(1) Տրամաբանական օրէնքները յարգած լինելու



ներով և իրենց արդի պետերով ու սխրագործ մարտիկներով (1)։

համար չեմ պնդեր, թէ Խրիմեանն իւր ստացած տասնեակ միլիոններն անպատճա՛ռ Հ· Յ· Դաշնակցութեան է տուել, բայց ուրի՛ հիմունք ունիմ այդպէս ենթադրելու և կարծելու։ Եթէ Հայոց ազգը կամենում է իմանալ, թէ Խրիմեանին իր տուած 10,000,000-ները Խրիմեանն ի՞նչ է արել, ապա պէտք է պահանջէ վեհափառ Կաթողիկոսից, որ վերջինս անմիջապէս ձերբակալել տայ հետեւեալ մարդկանց· 1· Հայի Սիմոն, Բիւրականի վեհարանի կառավարիչ)։ 2· Խորէն էֆ· Խրիմեան, 3· Վահան էֆ· Խրիմեան, 4· Ինձ անյայտ էֆ· ներ, 5. Հարցաքննութեան համար բերել տայ Սիբիրի տաժանակիր աշխատանքից երբեմնի Կորիւն վարդապետին (Խրիմեանի դիւանապետը և անզուգական սիրելին)։ 6· Հ· Յ· Դ·-թեան պետեր։ Իմ համոզմամբ այս մարդկանց խօսեցնելուց յետոյ թերեւս ճշմարտութիւնը երեւան գայ· եթէ յիշեալ պարոններն անմեղ դուրս կը գան, աւելի լաւ։ Խրիմեանը մեռած է, ճշմարտութեան այլ աղբիւր չունինք։

(1) Հայոց ազգի ինքնակամ և ինքնատնօրէն փրկիչները ո՛չ գլուխ ունին և ո՛չ էլ անկեղծութիւն, որովհետև եթէ այդ երկուսից մեկն ունենային, անպայման կը համոզուէին իրենց հակառակորդների բանավարութեանը, քանի որ մտածողի կամ անկեղծութիւն ունեցողի համար այս խնդիրը թուաբանական 2×2=4 բանաձեւի դժուարութիւնից ո՛չ աւելի դժուարութիւն է պարունակում և ո՛չ էլ պակաս։ Բայց որովհետև այսու հանդերձ փրկիչները պնդում են, թէ իրենց

Եւ որովհետև Հայոց եկեղեցական հանրապետութեան Գերագոյն խորհրդարանն իրաւաբանական անձն է, ուստի նորա գործունէութիւնն էլ իրաւաբանական հիմունքներ պէտք է ունենայ· Վերև յայտնած մտքերից ուղղակի բղխում են այս հիմունքները, որ այժմ պարզութեան համար կ'արձանագրեմ այստեղ· Առանց Հայոց եկեղեցական հանրապետութեան Գերագոյն խորհրդարանի քուէարկութեան, ո՛չ մի Անհատ և ո՛չ մի

Գլուխը Գերագոյն Գլուխն է և Իրենց Անկեղծութիւնն էլ Գերագոյն անկեղծութիւնը, ուստի Համազգային ժողովն իւր իրաւաբանական, իմաստասիրական, հասարակագիտական, պատմական, եկեղեցական և եկեղեցապետական վճիռները Գերագոյն հեղինակաւորութեան սրբագործութեան ենթարկելու համար պէտք է իւր նիստին հրաւիրէ Եւրոպացի հայասէր ականաւոր ուսուցչապետներից ու գիտնականներից երեք հոգի, իսկ յատկապէս Ընկերալարական հարցի համար Բեբելին կամ Ժոռէսին· որովհետև եթէ մի Ժոռէս, Բեբել ասէ մեր փրկիչներին, թէ «Պարոններ, դուք ո՛չ գլուխ ունիք, ո՛չ էլ անկեղծութիւն», այնուհետև նոքա անտարակոյս կը լռեն· եթէ չլռեն էլ, Բեբելի կամ Ժոռէսի հեղինակաւոր վճիռը դարձեալ կ'ունենայ իր բովանդակ հետեւանքը։ Եթէ պետութիւններն անգամ իրենց բարեկարգելու համար դիմում են եւրոպական ոյժերին, մենք աւելի ևս պէտք է դիմենք։

Համազգային ժողովի այս Գերագոյն վճիռը պէտք է հաստատուի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից և Կաթողիկոսի համապատասխան կոնդակի հետ պէտք է տպուի Հայոց լեզուով հրատարակուող բոլոր թերթերում և պէտք է կարդացուի բոլոր Հայ եկեղեցիներում՝ հասկացնելու ժողովրդի թէ՛ մեծին և թէ՛ փոքրին։ Միայն այս ճանապարհով կարող ենք չունչ տալ 20 տարի կուսակցապետների ձեռքով անխի՛ղճ չահագործութեան ենթարկուած թշուա՛ռ ժողովրդին։



կուսակցութիւն չէ կարող գործել Հայոց եկեղեցական հանրապետութեան անունով, դրամով և համար· Հայոց եկեղեցական հանրապետութեան մէջ ցարդ առաջացած և գործած բոլոր կուսակցութիւնները գոյացել և գործել են Հայոց եկեղեցականն հանրապետութեան անունով, դրամով և համար, առանց սակայն Հայոց եկեղեցական հանրապետութեան Գերագոյն խորհրդարանի քուէարկութեան. հետեւաբար վերջինս իրաւաբանօրէն միանգամա՛յն ի վիճակի է դատի հրաւիրելու յիշեալ կուսակցութիւնները։

Բաւական է այս· դատելուց յետոյ պէտք է պահանջէ Ազգի միլիոնները և Ազգի տերորուած զաւակների համար եղեռնադատ ատեանին պէտք է յանձնէ համապատասխան կուսակցութեան պետերին։

Ահա այս վերջին գործողութեան թէ՛ միջոցը և թէ՛ հիմունքները։

Հայոց եկեղեցին իւր զանազան հաստատներով այս կամ այն պետութեան քաղաքացին է և այդ պետութիւնից ճանաչուած է իբրեւ իրաւաբանական անձն· ասել է, Հայոց եկեղեցին պետական օրէնքով օժտուած է գործոն և կրաւորական իրաւունքներով· ուրեմն Հայոց եկեղեցական հանրապետութիւնը թէ՛ իբրեւ քաղաքացի և թէ՛ իբրեւ ներքնապէս անկախ հանրապետութիւն է տուժել անձով ու դրամով։ Հետեւապէս Հայոց հանրապետութիւնը որպէս քաղաքացի ու եկեղեցի իւր Գերագոյն խորհրդարանի քուէարկութեամբ իրաւաբանական հիմունքներով պէտք է պարտաւորեցնէ Հայոց եկեղեցական հանրապետութեան Գերագոյն վարչապետին, այն է՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որ վերջինս միջնորդէ Ռուսաց, Տաճկաց, Պարսից, Ա-

մերիկացւոց, Եգիպտացւոց կառավարութեան, որ նրանք իրենց քաղաքացին, այսինքն Հայաստանեայց եկեղեցին, զուտ քաղաքացիական տեսակէտից պաշտպանելու համար պահանջեն Հայոց կուսակցութիւնների կենդրոնը եղող տէրութիւնից, որ այդ տէրութիւնը հսկողութեան առնէ Հայոց բոլոր կուսակցապետներին և յանձնէ իբրեւ քրէական ու քաղաքացիական յանցաւորների։

Վեհափա՛ռ Տէր, Թող ամենեւի՛ն տարօրինակ չը թուի Ձեզ այս մտածելակերպը. դէմքերը և դէպքերը հոսանքի արշինով չափելու ո՛չ սովորութիւն ունիմ և ո՛չ էլ ընդունակութիւնը։ Յաւե՛ւմ եմ խորապէս, որ անթիւ անհամար Հայեր, մինչեւ իսկ հրապարակախօսներ, Հայոց ազգի նկատմամբ դաւաճան, աւազակ և ոճրագործ հանդիսացած Հային պատժից ազատել են կամենում այն մեկ պարզ պատճառով, թէ դաւաճանը, աւազակը և ոճրագործը հայ է։ Բայց այդ կարգի պարոններին կ՚ազդարարեմ, որ Հայոց ազգի անունով և հաշուով ա՛մենեւին բարերար չձեւանան. այդպէս վարուելու իրաւունք ունին մի՛միայն իրենց անունով և իրենց հաշուով։ այսինքն երբ տեսնեն, թէ իրենց կամ իրենց ընտանիքի վերաբերմամբ դաւաճանութիւն, աւազակութիւն և ոճրագործութիւն անողը Հայ է, թո՛ղ դատարան չդիմեն և հրաժարին իրենց իրաւունքներից. բայց ո՞ր Հայը այդքան ապուշ կը գտնուի իւր շահի առաջ. այդպիսի անվե՛րջ ապշութիւններ միայն Ազգի շահի նկատմամբ տեսնել կարող ենք։

Այնուհետեւ ամբողջ աշխարհի մէջ օրէնք է, որ պետութեան մէջ պետութեան նկատմամբ դաւաճանութիւն, աւազակութիւն և ոճրագործութիւն անողը խստի՛ւ պատժւում է առանց ազգի, կրօնի, դաւանու-



թեան, սեռի, տարիքի, պաշտօնի, աստիճանի և կոչման խտրութեան. արդ՝ ի՞նչ տրամաբանութեամբ և ի՞նչ փիլիսոփայութիւամբ ձեռքներս լուանանք և չդատենք Հայոց եկեղեցական հանրապետութեան վերաբերմամբ քաղաքացիական, քրէական և քաղաքական մեղապարտ երեւցած Հայ պարոններին. միայն մե՛կ տրամաբանութեամբ և մե՛կ փիլիսոփայութեամբ, այն է՝ ձրի ազգասիրութեա՛մբ և ձրի բարերարութեա՛մբ։ Ո՛չ, մենք պէտք է դատե՛նք Հայոց եկեղեցական հանրապետութեան այդ Հա՛յ կործանիչներին և պէտք է դատենք Զինուորական ատեանի Գերագո՛յն խստութեամբ և Գերագո՛յն ատենասրութեամբ, որովհետեւ միայն ա՛յս ճանապարհով կարող ենք բարձրացնել Հայոց եկեղեցական հանրապետութեան ընկած պատիւը և ապահովել նորա Գոյութիւնն ու Յառաջդիմութիւնը։

Վեհափա՛ռ Տէր, եթէ Երիմեանի պէս միմիայն Ոսկուն, Ծափին, կուռքին պէտք է ծառայէք և Ձեր մէջ Սիրտ, Խիղճ և Գլուխ չպէտք է գտնէք իսպա՛ռ մոռնալու Ոսկին, Ծափը, կուռքը և մի՛միայն Ազգին զոհաբերուելու, ապա ցա՛ծ իջէք անմիջապէս Լուսաւորչի Գահից, որպէս զի Ձեր ոսկորնե՛րն էլ Երիմեանի ոսկորների հետ Ազգը մի օր զայրացած Քասախ գետը չը թափէ. մի՛չտ յիշեցէք այս և ըստ ա՛յնմ բարձրացէք Ս. Սահակի Գահը։

Ձերդ Վեհափառութեան ամենահարազատ որդի և ամենախոնարհ ծառայ՝

Ուտի՝ ԵՂԻՇԷ Տ. ՊՕՂՈՍԵԱՆ

1909 թ. սեպտ. 20
Կ. Պոլիս

Տպագրութեան համար պատրաստ են և շուտով լոյս կը տեսնեն մեր հետևեալ աշխատութիւնները.

1. Հայոց ազգի եկեղեցական կազմակերպութեան անխուսափելիութեան հիմունքները
2. Կրօնի Դպրոցական հարցը
3. Ազատ Կրթութիւն
4. Պե՞տք է պահել Ազգութիւնը
5. Յեղափոխական եւ Միջամտութեան քաղաքականութիւն
6. Հայոց ազգի կրօնափոխութեան-Դաւանափոխութեան շուրջը
7. Հայոց քաղաքական միութիւն
8. Հայոց համազգային քաղաքական միութիւն
9. Սոկրատէսի քարոյագիտութիւնը (Էթիկայ)
10. Միակամութիւն (Մոնիզմ) եւ Հոգեմիակամութիւն (Սպիրիտիզմ)
11. Փիլիսոփայական նամակներ՝ ուղղած Էմմանուել Կանտի անձնական ընկերաց Կաուցկոյի եւ Բեյտոլիի
12. Էմմանուել Կանտի իմացաբանութիւնը (գնոսեոլոգիայ)

ՄԵՏ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Արմ ССР
Ա. ԻՄ. Ա. Մանդալյան

«Ազգային գրադարան»
NL0181221